



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 25/21**

23.12.2021թ.

ք. Երևան

Քաղաքացի Աղասի Շավարշի Դանիելյանը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 6-րդ, 9-րդ հոդվածների, 27-րդ հոդվածի 3-րդ մասի, 381-րդ հոդվածի 7-րդ մասի և 397-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 6-րդ, 9-րդ հոդվածների, 27-րդ հոդվածի 3-րդ մասի, 381-րդ հոդվածի 7-րդ մասի և 397-րդ հոդվածի համապատասխանությունը Սահմանադրության 1-ին, 61-րդ և 63-րդ հոդվածներին:

Դիմելով դատարան՝ Աղասի Դանիելյանը պահանջել է գնորդ Հեղուշ Գալստյանի մասով անվավեր ճանաչել 15.07.2014 թվականին իր և Հեղուշ Գալստյանի միջև կնքված անշարժ գույքի (բնակելի տան) առուվաճառքի պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ այդ գործարքով գնորդ Հեղուշ Գալստյանի իրավունքները փոխանցելով Վլադիմիր Սերգեյի Գասպարյանին և անչափահաս Վլադիմիր Վլադիմիրի Գասպարյանի օրինական ներկայացուցիչներ Վլադիմիր Սերգեյի Գասպարյանին և Սուսաննա Գասպարյանին, գնորդ Էմիլ Զուլոյանի մասով անվավեր ճանաչել 29.05.2015 թվականին երրորդ անձինք Բանկի, Ընկերության և Էմիլ Զուլոյանի միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը՝ այդ գործարքով վերջինիս ստանձնած իրավունքները փոխանցելով Վլադիմիր Սերգեյի Գասպարյանին և անչափահաս Վլադիմիր Վլադիմիրի Գասպարյանի օրինական ներկայացուցիչներ Վլադիմիր Սերգեյի Գասպարյանին և Սուսաննա Գասպարյանին, ուժը կորցրած ճանաչել անշարժ գույքի նկատմամբ կատարված համապատասխան իրավունքների պետական գրանցումների ուժով Երևանի Վրթ. Փափազյան փողոցի թիվ 2/5 բնակելի տուն հասցեում գտնվող՝ Վլադիմիր

Վլադիմիրի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի կազմում ներառված՝ վերջինիս սեփականության իրավունքով պատկանող Երևանի Վրթ. Փափազյան փողոցի թիվ 2/7 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքի 854,56քմ մակերեսով տան, 70,6քմ մակերեսով օժանդակ շինության և 126,3քմ մակերեսով խաղասրահի նկատմամբ 17.06.2015 թվականին կատարված իրավունքի պետական գրանցման ուժով Վլադիմիր Վլադիմիրի Գասպարյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը և Երևանի Վրթ. Փափազյան փողոցի թիվ 2/7 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գրանցել Վլադիմիր Սերգեյի Գասպարյանի և անչափահաս Վլադիմիր Վլադիմիրի Գասպարյանի օրինական ներկայացուցիչներ Վլադիմիր Սերգեյի Գասպարյանի ու Սուսաննա Գասպարյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը, Վլադիմիր Սերգեյի Գասպարյանից և անչափահաս Վլադիմիր Վլադիմիրի Գասպարյանի օրինական ներկայացուցիչներ Վլադիմիր Սերգեյի Գասպարյանից ու Սուսաննա Գասպարյանից բռնագանձել Պայմանագրի 4-րդ կետով նախատեսված անշարժ գույքի գինը՝ 900.000.000 ՀՀ դրամը և այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները՝ սկսած հայցադիմումը դատարան ներկայացնելու օրվան հաջորդող յոթերորդ օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ բռնագանձումը տարածելով վերը նշված անշարժ գույքի վրա, իսկ դրա անբավարարության դեպքում՝ Վլադիմիր Սերգեյի Գասպարյանին և անչափահաս Վլադիմիր Վլադիմիրի Գասպարյանի օրինական ներկայացուցիչներ Վլադիմիր Սերգեյի Գասպարյանին ու Սուսաննա Գասպարյանին պատկանող այլ գույքի վրա, բացառությամբ այն գույքի, որի վրա, օրենքին համապատասխան, բռնագանձում չի տարածվում:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մկրտչյան) (այսուհետ՝ Դատարան) 10.04.2020 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.09.2020 թվականի որոշմամբ Համապատասխանողների ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 10.04.2020 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Դիմողը և պահանջել բեկանել Վերաքննիչ դատարանի 29.09.2020 թվականի որոշումն ու օրինական ուժ տալ Դատարանի 10.04.2020 թվականի վճռին կամ գործն ուղարկել նոր քննության:

Վճռաբեկ դատարանը, քննելով թիվ ԵԴ/19367/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.09.2020 թվականի որոշման դեմ Աղասի Դանիելյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը, 04.03.2021 թվականի որոշմամբ մերժել է այն վարույթ ընդունել:

Ըստ Դիմողի, Վերաքննիչ դատարանը կայացրած որոշմամբ որպես 15.07.2014թ. կնքված գործարքն իրականում այլ անձանց միջև կնքված լինելու հանգամանքի ապացույց դիտարկել է միայն «Հետք» լրատվական կայքում տպագրված հոդվածը: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը նշել է. «Ինչ վերաբերվում է 15.07.2014թ. կնքված գործարքի՝ իրականում այլ անձանց միջև կնքված լինելու փաստին, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն փաստի ապացուցմանն ուղղված, այդ փաստի առումով վերաբերելի ապացույց է հանդիսանում «Հետք» լրատվական կայքում տպագրված հոդվածը:»:

Վերոգրյալ դիրքորոշմամբ Վերաքննիչ դատարանը ինքն է որոշել, թե գործում առկա որ ապացույցներով կարող է հաստատվել վկայակոչված փաստը՝ կոնկրետ գործի շրջանակներում առանձնացնելով գործում առկա միայն մեկ ապացույց:

Այսինքն՝ օրինական ուժի մեջ դատական ակտով հաստատվում է գոյություն ունեցող իրավակիրառ այն պրակտիկան, համաձայն որի՝ փաստի առկայությունը կամ բացակայությունը ստուգելու համար դատարանն ինքն է որոշում տվյալ փաստի հաստատման համար գործում առկա ապացուցողական բազան:

Նման մեկնաբանության պայմաններում անձը զրկվում է իր գործը պատշաճ ներկայացնելու (այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելը) հնարավորությունից, քանի որ, եթե դատարանը կարող է չանդրադառնալ գործին մասնակցող անձի ներկայացրած ապացույցներին, ապա իմաստագրկվում է անձին տրված՝ դրանք ներկայացնելու հնարավորությունը: Արդյունքում, ստացվում է, որ անձի՝ իր գործը պատշաճ ներկայացնելու իրավունքը երաշխավորված չէ օրենսդրական անհրաժեշտ կառուցակարգերով:

Դիմողը նշում է, որ Վերաքննիչ դատարանի եզրափակիչ դատական ակտը ստորագրել է նախագահող դատավոր Նորա Կարապետյանը և դատավոր Անի

Մխիթարյանը, իսկ դատավոր Գագիկ Խանդանյանը վերաքննիչ դատարանի եզրափակիչ դատական ակտը չի ստորագրել:

Ստացվում է, որ դատարանը, ի դեմս որի հանդես է գալիս կոլեգիան, չի ստորագրել իր կողմից կայացված որոշումը, ինչն ուղղակիորեն հանգեցնում է տվյալ որոշման բացակայության: Մասնավորապես, Վերաքննիչ դատավորների կոլեգիան, որը հանդես է գալիս որպես դատարան և որը Օրենսգրքի 381-րդ հոդվածի 7-րդ մասի իմաստով որոշումներ կայացնում է կոլեգիայի անդամ բոլոր դատավորների ստորագրությամբ, չի համարվի որոշում կայացրած դատարան:

Դիմողը նշում է նաև այն հանգամանքը, որ ձևավորված պրակտիկայի արդյունքում ներկայումս վճռաբեկ դատարանը չի պատճառաբանում վճռաբեկ բողոքը վարույթ չընդունելու որոշումները, ինչն ակնհայտորեն սահմանափակում է անձի՝ արդար դատաքննության իրավունքը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 66-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 6-րդ, 9-րդ հոդվածների, 27-րդ հոդվածի 3-րդ մասի, 381-րդ հոդվածի 7-րդ մասի և 397-րդ հոդվածի համապատասխանությունը Սահմանադրության 1-ին, 61-րդ և 63-րդ հոդվածներին:

Վիճարկվող ներմերի բովանդակությունը հետևյալն է.

Օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝

1. Դատական ակտը պետք է լինի օրինական:

2. Դատական ակտը պետք է լինի հիմնավորված և պատճառաբանված, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով:

Օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝

1. Դատական ակտը պատճառաբանված է, եթե դրանում արտացոլված են ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները:

2. Եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով, ապա դատարանը պարտավոր է դատական ակտում անդրադառնալ գործին մասնակցող անձանց կողմից

դատավարական փաստաթղթերում, բանավոր բացատրություններում, հարցերին տրված պատասխաններում ներկայացված բոլոր էական փաստարկներին, վկայակոչված իրավական հիմքերին և ներկայացված ապացույցներին, բացառությամբ այն դեպքերի, երբ ներկայացված փաստարկները կամ իրավական հիմքերն առերևույթ սխալ են, կամ կիրառման է ենթակա հայցային վաղեմության կամ որևէ դատավարական ժամկետ, և այդ փաստարկներին, իրավական հիմքերին կամ ապացույցներին անդրադառնալն անհրաժեշտ չէ տվյալ դատական ակտի կայացման համար:

3. Դատական ակտը չի կարող պատճառաբանվել ենթադրություններով՝ բացառությամբ այնպիսի ենթադրությունների, որոնք թույլատրելի են օրենքում ամրագրված կանխավարկածներով:

4. Դատական ակտը չի կարող պատճառաբանվել վերացական դատողություններով: Դատարանը չի կարող փաստել, որ գործին մասնակցող որևէ անձ չի կատարել որևէ փաստական հանգամանք ապացուցելու պարտականությունը՝ առանց ցույց տալու, թե տվյալ փաստական հանգամանքն ինչ պատճառով չի կարող ապացուցված համարվել գործում առկա ապացույցներով:

5. Այն դեպքում, երբ գործի քննության ընթացքում ծագել է վեճ կիրառման ենթակա նորմի վերաբերյալ, ապա դատական ակտում պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Օրենսգրքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

3. Վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատարանի եզրափակիչ դատական ակտերի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքները քննում և դրանց վերաբերյալ, ինչպես նաև սույն օրենսգրքի 384-րդ և 385-րդ հոդվածներով նախատեսված հարցերով որոշումները կայացնում է կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով:

Օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Դատարանը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

2. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, իսկ բոլոր ապացույցներն իրենց համակցության մեջ՝ փաստի հաստատման համար բավարարության տեսանկյունից:

Օրենսգրքի 381-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝

7. Վերաքննիչ դատարանի որոշման յուրաքանչյուր էջը կնքվում է գործը զեկուցող դատավորի կնիքով, իսկ որոշման եզրափակիչ մասն ստորագրում և կնքում են բողոքը քննած դատավորները:

Օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝

1. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվում է, եթե բացակայում են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու, այն վերադարձնելու կամ առանց քննության թողնելու հիմքերը:

2. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին Վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում գործը Վճռաբեկ դատարանում ստանալու օրվանից երեք ամսվա ընթացքում: Վճռաբեկ դատարանի որոշումը պետք է բավարարի սույն օրենսգրքի 200-րդ հոդվածով սահմանված պահանջները:

3. ...

Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝

Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Նախ անդրադառնանք Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների վերաբերյալ Սահմանադրական դատարանի դիրքորոշմանը, ապա անդրադարձ կատարենք Դիմողի կողմից վիճարկվող դրույթներին՝ առանձին-առանձին:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՌ-719 որոշման մեջ նշել է. «6. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր

իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոսնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մաս): Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոսնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսինքն՝ անձը, դիմելով դատարան, պետք է լիարժեք դատական պաշտպանության իրավունք ունենա, ապահովված լինի արդար դատաքննություն իրականացնելու պետության պարտավորությամբ, իր իրավունքների լիարժեք պաշտպանության լեզիտիմ ակնկալիքով:

1. Դիմողը վիճարկում է Օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին՝ այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ դատարանն է որոշում, թե ներկայացված ապացույցները որ փաստի հաստատմանն են ուղղված, ինչի արդյունքում կարող է չանդրադառնալ առանձին ապացույցների մերժման հիմքերին, և Օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին՝ այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ առանձին տեսակի ապացույցն նախապես՝ մինչև ապացույցի հետազոտությունը, կարող է դիտարկվել որպես ոչ բավարար, առանձին փաստի հաստատման համար:

Նշված հոդվածը վերաբերում է ապացույցների գնահատմանը, որի 1-ին մասի համաձայն՝ *դատարանը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:*

Օրենսդիրը դատարանից պահանջում է կայացնել օրինական և հիմնավորված վճիռ: Դատարանի խնդիրն ու գործառույթն է գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա որոշել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող՝ ապացուցման ենթակա փաստերը, կողմերի ներկայացրած ապացույցների հիման վրա հաստատված կամ չհաստատված համարել այս կամ այն փաստը և ըստ այդմ որոշել վիճելի իրավահարաբերության բնույթը և դրա նկատմամբ կիրառելի իրավանորմը (ՄԴՈ- 1004):

Այսինքն՝ առանձին տեսակի ապացույցը նախապես՝ մինչև ապացույցի հետազոտությունը, չի կարող դիտարկվել որպես ոչ բավարար, առանձին փաստի հաստատման համար, քանի որ Օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ սահմանում է, որ *յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, իսկ բոլոր ապացույցներն իրենց համակցության մեջ՝ փաստի հաստատման համար բավարարության տեսանկյունից:* Սա նշանակում է, որ նախ ապացույցը պետք է ուսումնասիրվի, որպեսզի պարզվի գործի հանգամանքներին դրանց վերաբերելիությունը և թույլատրելիությունը, որն էլ իր հերթին բացառում է այն իրավիճակը, երբ առանձին տեսակի ապացույցը նախապես՝ մինչև ապացույցի հետազոտությունը, կարող է դիտարկվել որպես ոչ բավարար, առանձին փաստի հաստատման համար: Նշված հոդվածի մեջ տեղ գտած *«յուրաքանչյուր*

ապացույց» ձևակերպումն ինքնին նշանակում է, որ դատարանի կողմից պետք է ուսումնասիրության ենթարկվեն կողմերի կողմից ներկայացված բոլոր ապացույցները:

2. Դիմողը վիճարկում է Օրենսգրքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի և 381-րդ հոդվածի 7-րդ մասի համապատասխանությունը Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ կոլեգիալության սկզբունքով գործը քննող Վերաքննիչ դատարանի որոշումը կարող է ստորագրվել նաև միայն դրան կողմ քվեարկած դատավորների կողմից:

Ըստ Օրենսգրքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի՝ *Վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատարանի եզրափակիչ դատական ակտերի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքները քննում և դրանց վերաբերյալ, ինչպես նաև սույն օրենսգրքի 384-րդ և 385-րդ հոդվածներով նախատեսված հարցերով որոշումները կայացնում է կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով*: Իսկ Օրենսգրքի 381-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *Վերաքննիչ դատարանի որոշման յուրաքանչյուր էջը կնքվում է գործը զեկուցող դատավորի կնիքով, իսկ որոշման եզրափակիչ մասն ստորագրում և կնքում են բողոքը քննած դատավորները*:

Բողոքարկման ինստիտուտի ողջ տրամաբանությունը՝ ընդհանրապես, և արդարադատության համակարգի ներսում՝ մասնավորապես, հանգում է նրան, որ մի օղակի ապօրինի վարքագծի վիճարկումը հասցեագրված լինի բացառապես վերադաս ատյանին: Այս տրամաբանությամբ է կառուցված ՀՀ արդարադատական համակարգի ներսում բողոքարկման ողջ մեխանիզմը: Գործն ըստ էության լուծող դատական ակտերը բողոքարկվում են վերաքննության և վճռաբեկության՝ Օրենսգրքով սահմանված կարգով, իսկ վերաքննիչ վարույթն, իր հերթին, միտված է նրան, որ ապահովվի դատական ակտերի դեմ բերված բողոքների կոլեգիալ կարգով քննությունը, ինչը կստեղծի արդյունավետության և օբյեկտիվության լրացուցիչ երաշխիք:

Օրենսգրքի 381-րդ հոդվածի 7-րդ մասը հստակ սահմանում է, որ *Վերաքննիչ դատարանի որոշման եզրափակիչ մասն ստորագրում և կնքում են բողոքը քննած դատավորները*: Իսկ Օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ մասը նախատեսում է՝ մեծամասնության կարծիքին չհամաձայնվող դատավորի հատուկ կարծիք ունենալու մասին նրա ստորագրությամբ նշում է կատարվում դատական ակտում: Հատուկ կարծիքն այն ներկայացրած դատավորի ստորագրությամբ կցվում է դատական ակտին:

Այսինքն՝ կոլեգիայի կազմի մեջ մտնող այլ դատավորների հետ համաձայն չլինելու դեպքում, դատավորը պարտավոր է ստորագրել և կնքել դատական ակտի եզրափակիչ

մասը, իսկ հատուկ կարծիք ունենալու դեպքում ստորագրությամբ նշում կատարել այդ մասին (այսինքն՝ նույնիսկ հատում կարծիք ունենալու դեպքում Օրենսգիրքը նախատեսում է դատական ակտում դատավորի ստորագրության պարտադիր առկայությունը):

3. Դիմողը վիճարկում է Օրենսգրքի 6-րդ, 9-րդ և 397-րդ հոդվածների համապատասխանությունը Սահմանադրության 1-ին, 61-րդ և 63-րդ հոդվածներին այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ Վճռաբեկ դատարանը կարող է չպատճառաբանել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը և ցույց չտալ ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը:

Սահմանադրական դատարանը, անրադառնալով դատական ակտի պատճառաբանվածությանը, 2010 թվականի հունիսի 15-ի ՍԴՈ-896 որոշման մեջ նշել է. «Այլ է վիճակը «...կամ պատճառաբանված չէ» բառակապակցության առնչությամբ: Նման ձևակերպման առկայությունն ինքնաբերաբար ենթադրում է չպատճառաբանված դատական ակտի գոյություն: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 9 ապրիլի 2007թ. ՍԴՈ-690 որոշման մեջ հստակ իրավական դիրքորոշումներ է արտահայտել դատական ակտի պատճառաբանված լինելու սահմանադրաիրավական անհրաժեշտության վերաբերյալ, և այդ դիրքորոշումներն ամբողջությամբ վերաբերելի են նաև քննության առարկա գործին: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրությունն ընդհանրապես պետք է բացառի չպատճառաբանված դատական ակտի գոյությունը, որովհետև նման ակտը չի կարող համապատասխանել իրավական պետության հիմնարար սկզբունքներին, չի կարող երաշխավորել մարդկանց իրավունքների արդյունավետ դատական պաշտպանություն, ինչպես նաև ապահովել խախտված իրավունքների արդյունավետ վերականգնում:

Այդ նկատառումներից ելնելով է, որ, մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (հոդված 132) պարտադիր նորմատիվ պահանջ է սահմանում դատական վճռի բովանդակության վերաբերյալ, նախատեսելով, որ «դատարանի վճիռը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից»: Միաժամանակ, նույն հոդվածի 1-ին մասում սահմանվում է, որ «Վճռի պատճառաբանական մասում պետք է նշվեն դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի

հետևությունները, այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները, ինչպես նաև այն օրենքները, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս»:

Դատարանի վճռի պատճառաբանման անհրաժեշտությանն անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ մասնավորապես շեշտելով, որ արդար դատաքննության պահանջը ներառում է նաև դատարանի պատճառաբանված որոշում ընդունելու պարտավորությունը (տե՛ս Van de Hunk v. the Netherlands, Judgment of 19 April 1994):»:

Դատական ակտի պատճառաբանվածության հարցի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված երաշխիքները ներառում են դատարանների՝ իրենց որոշումների վերաբերյալ բավարար պատճառներ ներկայացնելու պարտականությունը (**Case of H. v. Belgium, application no. 8950/80, 30/11/1987**),

- չնայած ներպետական դատարանը փաստարկներն ընտրելիս և ապացույցներն ընդունելիս ունի որոշակի հայեցողական լիազորություններ, այն պարտավոր է հիմնավորել իր գործողությունները՝ իր որոշումների պատճառները ներկայացնելով (**Case of Suominen v. Finland, application no. 37801/97, 01/07/2003**),

- ներկայացված պատճառները պետք է այնպիսին լինեն, որ կողմերը կարողանան արդյունավետորեն օգտագործել բողոքարկման ցանկացած գործող իրավունք (**Case of Hirvisaari v. Finland, application no. 49684/99, 27/09/2001**),

- «արդար ընթացակարգ» հասկացությունը պահանջում է, որ ստորադաս դատարանի պատճառաբանությունը ներառելու միջոցով կամ որևէ այլ կերպ իր որոշումների վերաբերյալ թերի պատճառաբանություն ներկայացրած ազգային դատարանը փաստացի անդրադարձած լինի իր իրավասությանն առնչվող հարցերին և ոչ թե առանց լրացուցիչ քաջքշուկի գուտ հաստատած լինի ստորադաս դատարանի կողմից արված եզրահանգումները (**Case of Helle v. Finland, application no. 20772/92, 19/12/1997**):

Վերոգրյալից բխում է, որ դատարանը դատական ակտ կայացնելիս պետք է անդրադարձ կատարի ինչպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող, այնպես էլ գործի լուծման համար նշանակություն չունեցող փաստերին՝ ներկայացնելով այդ փաստի հաստատված լինել կամ չլինելու վերաբերյալ համապատասխան եզրահանգում: Նման իրավական կարգավորման նպատակը, առաջին հերթին, հնարավորինս հստակ և որոշակի դատական ակտի կայացման ապահովումն է, որպեսզի դատարան դիմած անձի համար հստակ լինեն այն բոլոր հարցերի պատասխանները, որոնց առնչությամբ դիմել է դատարան: Դատական ակտի պատճառաբանական մասը մեծ կարևորություն ունի, քանի որ դրա շրջանակներում ներկայացվում են այն վերլուծությունները, որոնք հետագայում հիմք են հանդիսանում կոնկրետ եզրահանգման գալու համար:

Դատական ակտի պատճառաբանական մասի վերաբերյալ Սահմանադրական դատարանը նախկինում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Վճռի պատճառաբանական մասում պետք է նշվեն դատարանի կողմից պարզված՝ գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները, ինչպես նաև այն օրենքները, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս: Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ արդարադատության իրականացման տեսանկյունից կարևորվում է ոչ միայն դիմողի պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ դատարանի եզրահանգումը, այլև այն իրավական վերլուծությունները, որոնք ներկայացված փաստերի և հանգամանքների լույսի ներքո հիմք են ծառայել կոնկրետ եզրահանգման գալու համար: Դա է նաև պատճառը, որ յուրաքանչյուր կոնկրետ գործով դատարան դիմելիս անձը չի սահմանափակվում միայն այս կամ այն պահանջի ներկայացմամբ, այլ նշում է այն բոլոր էական փաստերը, որոնց վրա հիմնվում է իր պահանջը: Այդ իսկ պատճառով անձի պահանջի բավարարումը դեռ չի նշանակում, որ անձի խնդիրն ամբողջությամբ լուծվել է, քանի որ նրա համար իրավական հետևանքներ է առաջացնում ոչ միայն իր պահանջի բուն բավարարումը կամ մերժումը, այլև այն հանգամանքը, թե ինչ պատճառաբանություններ են դրվել նման եզրահանգման հիմքում: Եթե դատարանի քննությանը հանձնված վեճը լուծվում է հոգուտ դատավարության այս կամ այն մասնակցի, դեռ հնարավոր չէ միանշանակ պնդել, որ այդ դատական ակտի պատճառաբանական մասում ներկայացված վերլուծությունները

նույնպես դրական ազդեցություն են ունենում դատավարության այդ մասնակցի համար: Վերջիվերջո, հարկ է նկատի ունենալ, որ նույնպիսի եզրահանգման հնարավոր է գալ տարբեր պատճառաբանություններով, ուստի իրավական հետևանքների գնահատման տեսանկյունից պետք է գնահատման առարկա դարձնել ոչ միայն դատական ակտի եզրափակիչ մասում ձևակերպված եզրահանգումը, այլև այն պատճառաբանությունները, որոնք հիմք են հանդիսացել դրա համար: Դատական ակտի պատճառաբանական մասում ներկայացված վերլուծություններն ու դիրքորոշումները կարևոր են նաև այն առումով, որ դրանց առկայությամբ անձի համար հստակ, որոշակի և կանխատեսելի է դառնում իր հետագա ճիշտ վարքագծի դրսևորումը:»:

Օրենսգրքի 6-րդ հոդվածը, որը վերաբերում է դատական ակտերի ներկայացվող ընդհանուր պահանջներին, սահմանում է, որ *դատական ակտը պետք է լինի հիմնավորված և պատճառաբանված, եթե այլ բան նախատեսված չէ Օրենսգրքով*: Օրենսգրքի 9-րդ հոդվածն, իր հերթին, վերաբերում է դատական ակտի պատճառաբանվածությանը և սահմանում է, թե երբ է դատական ակտը համարվում պատճառաբանված: Ըստ այդմ՝ *դատական ակտը պատճառաբանված է, եթե դրանում արտացոլված են ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները*: Դատարանը պարտավոր է դատական ակտում անդրադառնալ գործին մասնակցող անձանց կողմից դատավարական փաստաթղթերում, բանավոր բացատրություններում, հարցերին տրված պատասխաններում ներկայացված բոլոր էական փաստարկներին, վկայակոչված իրավական հիմքերին և ներկայացված ապացույցներին, բացառությամբ այն դեպքերի, երբ ներկայացված փաստարկները կամ իրավական հիմքերն առերևույթ սխալ են, կամ կիրառման է ենթակա հայցային վաղեմության կամ որևէ դատավարական ժամկետ, և այդ փաստարկներին, իրավական հիմքերին կամ ապացույցներին անդրադառնալն անհրաժեշտ չէ տվյալ դատական ակտի կայացման համար:

Այսինքն՝ եթե գործին մասնակցող անձի ներկայացրած փաստարկները կամ իրավական հիմքերն *առերևույթ* սխալ չեն, կամ կիրառման ենթակա չէ հայցային վաղեմության կամ որևէ դատավարական ժամկետ, և այդ փաստարկներին, իրավական հիմքերին կամ ապացույցներին անդրադառնալն անհրաժեշտ չէ տվյալ դատական ակտի կայացման համար, ապա դատարանը *պարտավոր է* դատական ակտում անդրադառնալ

գործին մասնակցող անձանց կողմից դատավարական փաստաթղթերում, բանավոր բացատրություններում, հարցերին տրված պատասխաններում ներկայացված բոլոր էական փաստարկներին, վկայակոչված իրավական հիմքերին և ներկայացված ապացույցներին:

Վերը նշված հանգամանքներին չանդրադառնալու և դատական ակտում ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքի արտացոլման և դրանից բխող եզրահանգումների բացակայության դեպքում դատական ակտը դառնում է չպատճառաբանված, նման դատական ակտի գոյությունը խաթարում է արդարադատության էությունը, անձի՝ արդար դատաքննության իրավունքը: Առավել ևս, որ Օրենսգրքի 397-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, *Վճռաբեկ դատարանի որոշումը պետք է բավարարի սույն օրենսգրքի 200-րդ հոդվածով սահմանված պահանջները*: Իսկ Օրենսգրքի 200-րդ հոդվածի համաձայն՝

1. Առաջին ատյանի դատարանի՝ առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն՝

1) առաջին ատյանի դատարանի անվանումը, դատարանի կազմը, գործի համարը, որոշումը կայացնելու տարին, ամիսը, ամսաթիվը, հայցի առարկան,

2) գործին մասնակցող անձանց անունը (անվանումը),

3) հարցը, որի վերաբերյալ որոշում է կայացվում,

4) հիմնավորումները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ,

5) քննարկվող հարցի վերաբերյալ եզրահանգումը,

6) որոշումը բողոքարկելու կարգը և ժամկետը, եթե այն ենթակա է բողոքարկման, իսկ եթե որոշումը բողոքարկման ենթակա չէ, ապա նշում այդ մասին:

Այսինքն, Օրենսգիրքն ամեն դեպքում նախատեսում է, որ Վճռաբեկ դատարանի որոշումը պետք է լինի պատճառաբանված: Սակայն, հարկ ենք համարում նշել, որ ցավոք, Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորվել է նման արատավոր պրակտիկա, երբ վճռաբեկ բողոքը վարույթ չընդունելու մասին Վճռաբեկ դատարանի որոշումները պատճառաբանված չեն և պարունակում են ընդհանուր ձևակերպումներ:

Այսպես, հիմք ընդունելով վերոգրյալը և ուսումնասիրելով Դիմողի նկատմամբ թիվ ԵԴ/19367/02/18 քաղաքացիական գործով 29.09.2020 թվականին Վերաքննիչ դատարանի

կողմից կայացված եզրափակիչ դատական ակտը, հանգում ենք այն եզրակացության, որ այն կայացվել է Օրենսգրքի պահանջների պահպանմամբ, ավելին նշված դատական ակտը ստորագրել են նախագահող դատավոր Նորա Կարապետյանը և դատավոր Անի Մխիթարյանը, իսկ դատավոր Գագիկ Խանդանյանի ստորագրության և կնիքի վերին հատվածում՝ դատավորի անվան կողքին, առկա է նշում, որ դատավորն ունի հատուկ կարծիք: Դիմողի այն պնդումը, թե Գ. Խանդանյանը որոշումը չի ստորագրել, չի համապատասխանում իրականությանը: Վերաքննիչ դատարանի կողմից պահպանվել են դատական ակտին ներկայացվող պահանջները:

Վճռաբեկ դատարանը, քննելով թիվ ԵԴ/19367/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.09.2020 թվականի որոշման դեմ Աղասի Դանիելյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը, 04.03.2021 թվականի որոշմամբ մերժել է այն վարույթ ընդունել: Նշված որոշման ուսուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշումը պատճառաբանված չէ, քանի որ որոշման մեջ նշված է միայն, թե վճռաբեկ բողոքը երբ է վարույթ ընդունվում, ինչ հիմքերի առկայության դեպքում և որ նշված գործով նման հիմքեր առկա չեն: Նշված որոշմամբ անդրադարձ չկա կատարված ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքին: Իրավական պետությունը պետք է բացառի չպատճառաբանված դատական ակտի գոյությունը, քանի որ նման ակտը չի կարող համապատասխանել իրավական պետության հիմնարար սկզբունքներին, չի կարող երաշխավորել մարդկանց իրավունքների արդյունավետ դատական պաշտպանություն, ինչպես նաև ապահովել խախտված իրավունքների արդյունավետ վերականգնում:


Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- Օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի այնպիսի մեկնաբանությունը, համաձայն որի՝ դատարանն է որոշում, թե ներկայացված ապացույցները որ փաստի հաստատմանն են ուղղված, ինչի արդյունքում կարող է չանդրադառնալ առանձին ապացույցների մերժման հիմքերին, և Օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի այնպիսի մեկնաբանությունը, համաձայն որի՝ առանձին տեսակի ապացույցն նախապես՝ մինչև ապացույցի հետազոտությունը, կարող է դիտարկվել որպես ոչ բավարար, առանձին փաստի հաստատման համար, որպես այդպիսին, Սահմանադրության 61-րդ և 63-րդ

հողվածների տեսանկյունից խնդրահարույց են, սակայն Դիմողի գործով նշված հողվածի նման մեկնաբանություն չի իրականացվել, ուստի դիմումն այս մասով ակնհայտ անհիմն է և ենթակա է կարճման:

- Օրենսգրքի 27-րդ հողվածի 3-րդ մասի և 381-րդ հողվածի 7-րդ մասի այնպիսի մեկնաբանությունը, համաձայն որի՝ կոլեգիալության սկզբունքով գործը քննող Վերաքննիչ դատարանի որոշումը կարող է ստորագրվել նաև միայն դրան կողմ քվեարկած դատավորների կողմից, որպես այդպիսին Սահմանադրության 63-րդ հողվածի 1-ին մասի տեսանկյունից խնդրահարույց է, սակայն Դիմողին վերաբերող գործի շրջանակներում նման մեկնաբանություն Վերաքննիչ դատարանի կողմից չի կատարվել, ուստի դիմումն այս մասով ակնհայտ անհիմն է և ենթակա է կարճման:

- Օրենսգրքի 6-րդ, 9-րդ և 397-րդ հողվածների՝ իրավակիրառ պարկտիկայում այնպիսի մեկնաբանությունը, համաձայն որի՝ Վճռաբեկ դատարանը կարող է չպատճառաբանել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը և ցույց չտալ ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը, Սահմանադրության 1-ին, 61-րդ և 63-րդ հողվածների տեսանկյունից խնդրահարույց է:

 Recoverable Signature

Համակարգող՝

X Lyudvik Davtyan

Լյուդվիկ Դավթյան

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169